

ՀՈՒՇԱԹԵՐԹ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒ-
ԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ՍՏՈՒԳՈՂ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ՀԱՄԱՐ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՊԵՏԱԿԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ

ԵՐՑ Ե Վ Ա Ն

1936

Բարգմանեց ռուսերենից Լ. ՄԻՐՋԱ-ԱՎԱԳՅԱՆ
Պատկերագիր Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեյ. ձեռ. յեղ. սրբ. Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դատարան № 419
Գրառվեր № 850/512
Տիրամ 2000

ՅԱՆԱՎԱՄ-ՀՐԱՏ. ԲՅՈՒՐՈՒ

Դատարանի տառարան, Մերկան, Նալբանդյան № 11.

18 DEC 2017

Հ Ո Ւ Ծ Ա Թ Ե Ր Թ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒ-
ՄԸՆ ՍՏՈՒԳՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ՀԱՄԱՐ

«Դյուղատնտեսական գույքի, անասուն-
ների և ցանքերի պետական պարտադիր
ապահովագրությունը, պահպանելով կոլ-
տնտեսությունների և մենատնտեսների՝
վաղվա կոլտնտեսականների գույքը հրդեհ-
ների, անկման և տարերային ազեղների հե-
տևանքներից մի հզոր զենք և հանդիսանում
կոլտնտեսային արտադրության ամրացման
և հանրային սեփականության պաշտպա-
նության գործում»:

(Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1933 թ. մարտի 8-ի
վերջումից):

1. ՍՏՈՒԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1933 թ. մարտի 8-ի՝
դյուղի ապահովագրական աշխատանքի խնդարյուն-
բանների վերաբերյալ վերջումից նշել ե, վար զառա-

կարգային թշնամիքն, ոգտվելով այն հանգամանքից, վոր ֆլասանիք մասին ակտեր կազմելու ժամանակ հսկողություն չի յեղել և ապահովագրական աշխատողները դասակարգային զգոնություն չեն ունեցել, ոգտագործել և պետական ապահովագրությունը պետությունը խաբելու համար, ծածկելով ապահովագրական ակտերով անտնտեսվարություն և ուղղակի ֆլասարարություն հետևանքները:

Կենտրոնական Կոմիտեյի ցուցումների համաձայն արգելվում է ապահովագրական վարձատրություն վճարել այն ֆլասանների համար, վորոնք առաջ են յեկել վոչ թե տարերային աղետներից, այլ անտնտեսվարություն, անխնա շահագործման կամ գեպի ապահովագրված գույքը ֆլասարար վերաբերմունք ունենալու հետևանքով: Այն անձինք, վորոնք հանցավոր են գրանում և փորձեր են անում խորհրդային պետությունը խաբելու համար, պետք է քրեական պատասխանատվության յենթարկվեն:

Ապահովագրական վարձատրություն վճարելու ճշտություն ստուգման հիմնական խնդիրն է՝ զարգել թե ինչպես են իր գործում գործնականում պետական ապահովագրության որդանները և գյուղական ու շրջանային ապահովագրական հանձնաժողովները կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի 1933 թ. մարտի 8 ի՝ պետապահովագրության վերաբերյալ վորոշումը, ինչպես նաև հայտարարել ու վերացնել ապահովագրական ֆլասանների լուծարքման գործում յեղած թերությունները:



1-327294

Այդ կապակցությամբ գյուղական ստուգող բրիգադներին վրա դրվում են հետևյալ պարտականությունները:

Ա.Ռ.Ա.ՋինՆ, հայտարարել ապորինի կերպով տպանովագրական վարձատրություն վճարելու փաստերը, այսինքն, այնպիսի դեպքեր, յերբ գույքը (առանձնները, ցանքերը, շենքերը և այլն) փչացել և բացահայտ անտնտեսվարության պատճառով, ինչպես նաև ֆլասաներ հատուցել ապորինի կերպով մեծելու փաստեր: Բանը նրանումն է, վոր առանձին շրջանային ապահովագրական հանձնաժողովներ և ապահովագրական տեսչություններ սխալ են հասկանում ապահովագրական կանոնները և հրաժարվում են ապահովագրական վարձատրություն տալ անգամ այն ժամանակ, յերբ ապահովագրվողն անշուշտ այդ իրավունքն ունի:

Ստուգող բրիգադները, պարզելով նման խեղությունների բոլոր դեպքերը, պետք է շտապ կերպով վերացնեն դրանք:

ՅԵՐԿԻՐ ԻՎԻ ԽՆԴԻՐՆ Ե՝ վերջ սալ ֆաեեուկին սարերույին աղետներից տուժած ճնեխություններին ապահովագրական վարձատրություն վճարելու գործում:

Հաճախ գյուղխորհուրդներն ամիսներով պահում են իրենց մոտ այն ապահովագրական ակտերը, վորոնց հիման վրա ֆլասանների վճարում պետք է կատարվի: Հաճախ պատահում է, վոր ապահովագրական ակտերը յերկար ժամանակ մնում են ապահովագրական տեսչու-

թյան մոտ և չեն քննվում շրջանային ապահովագրական հանձնաժողովի կողմից: Յերբեմն ապահովագրական որգանները չինքնիկական, ֆորմալ մոտեցում են ունենում աշխատավորների բողոքների քննությանը, վոր տրված են ֆևասների սխալ վճարման կամ չվճարման առթիվ:

ՅԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐԸ ապահովագրված գույքի փչացման կամ վոչնչացման քազցնելու դեմ պայքարելն է: Առանձին կոտնտեսություններ, կոտնտեսականներ և մենատնտեսներ չեն հայտնում ապահովագրված գույքի կորստի մասին: Յերբեմն դա հետևանք է լինում այն բանի, վոր ապահովագրվողները տեղակ չեն լինում ապահովագրության վերաբերվող որենքներին, իսկ շատ դեպքերում եւ բացատրվում է նրանով, վոր աշխատում են խույտ տալ պատասխանատվությունից դեպի ապահովագրված գույքն իրենց ցույց տված անտնտեսավար վերաբերմունքի համար:

ՉՈՐՐՈՐԴ ԽՆԴԻՐԸ՝ գյուղական ապահովագրական հանձնաժողովների աշխատանքը բարելավելն է: Դեռևս նրանցից շատիւ աւփոյթ են վերաբերվում դեպի իրենց պարտականությունները, ի բացկայա յեն կազմում աւտերը կամ բոլորովին չեն կազմում, չեն հայտնաբերում ապահովագրված գույքի փչացման կամ վոչնչացման իսկական պատճառները: Լինում են նաե դեպքեր, յերբ ապահովագրական աւտերը, հակառակ որենքի, կազմում են

գուղերորհուրդների քարտուղարները կամ իրենք կոտնտեսությունները:

ՀԻՆԴԵՐՈՐԴ ԽՆԴԻՐՆ Ե ստուգել ապահովագրված գույքի վիճակը կոյնսեսություններում նրա պատշապանությունն ու ճահագործումը բարելավելու նպատակով:

Բացի այդ խնդրներից ֆևասների վճարման ստուգումը պետք է նպատի կոտնտեսային հասարակական աւտիքի ներգրավմանն ապահովագրական աշխատանքի մեջ, պետական ապահովագրության մասսայականացմանն ու ապահովագրության կամավոր տեսակների զարգացմանը:

2. ՍՏՈՒԳՈՂ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿՕՋՄԸ

Գյուղական ստուգող բրիգադները պետք է բաղկացած լինեն 3—5 հոգուց: Դրանց մեջ մտցվում են՝ բրիգադավարը—շրջործկոմի լեադոր, գյուղերորդի ֆինանսական սեկյիայի ներկայացուցիչը, գյուղական ապահովագրական հանձնաժողովի ներկայացուցիչը և հասարակական կազմակերպությունների՝ կոմյերիտմիության, պրոֆմիության, ապահովագրական աւտիքի և այլ ներկայացուցիչներ:

Շատ կարեոր է ֆևասների վճարման ստուգման աշխատանքների մեջ անատնաբուժական աշխատողների և գյուղատնտեսների, ինչպես նաե վորակի վրա հակող տեսուչների ներգրավելը: Ապահովագրական

Զարձատրության վճարումը կոլտնտեսություններում ստուգելիս պետք է ներկա լինի կոլտնտեսության վարչության ներկայացուցիչը:

Գյուղական ստուգող բրիգադների աշխատանքի ղեկավարությունը ղրվում է շրջանային ապահովագրական հանձնաժողովների վրա:

3. ՍՈՒԳՈՂ ԲՐԻԳԱԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՍՐԳԸ

Ստուգման յենթակա յին 1936 թ. հունվարի 1-ից հետո կազմված ակտերը՝ թե վճարված և թե այն ակտերը, վորոնցով ֆլամսներ հատուցելը մերժված է: Ստուգող բրիգադի ղեկավարը ստանում է ապահովագրական տեսչից ստուգվելիք ապահովագրական ակտերի ցուցակը: Ծուցակն ստանալիս բրիգադավարը պետք է համեմատի այն ակտերի ունեւորում յիդած նշումների հետ և համոզվի, վոր ցուցակի մեջ սլուցված են բոլոր ակտերը: Այնուհետև բրիգադավարը շրջանային ապահովագրական հանձնաժողովի արձանագրություններով պետք է մանրամասն ծանոթանա ապահովագրական վարձատրություն վճարելը մերժելու պատճառներին:

Գյուղխորհրդում բրիգադավարը կազմում է բրիգադ և ղեկուցում կոլտնտեսականների ընդհանուր ժողովում ստուգման նպատակների և խնդիրների մասին: Մինչ աշխատանքների սկսելը բրիգադը պետք է նայի տվյալ գյուղխորհրդի ակտերը և շրջանային

17
ապահովագրական հանձնաժողովի վորոշումներն այդ առթիվ:

Ապահովագրված գույքի կորստի կամ ֆլամսան իսկական պատճառները վորոշելու համար բրիգադը շրջում է տարերային աղետներից տուժած տնտեսությունները և հարցաքննում ապահովագրվածներին, վկաներին, անասնաբուժական և հրեջ աշխատողներին, ապահովագրական ակտիվիստներին, կոլտնտեսությունների նախագահներին և այլ անձանց:

Բրիգադի խնդիրն է պարզել թե ինչից է փչացել գույքը՝ անտնտեսավարությունից, պաշտպանության բացակայությունից, կոպիտ անզգուշությունից, թե տարերային աղետից, վորը չեն կարելի կանխել: Գյուղատնտեսական անասունների անկման վերաբերյալ ակտերը կոլտնտեսություններում ստուգելիս կարելի յն քննել անասունի անկման պատճառներն այն բրիգադի կոլտնտեսականների հետ, վորի մոտ անասունի անկումն է տեղի ունեցել: Միաժամանակ, պետք է մանրամասն ուսումնասիրել անասունների պահպանման, խնամքի և կերակրման պայմանները նույն կոլտնտեսության մեջ:

Ցել յեթե կպարզվի, վոր չպետք է մերժվեր ֆլամսներ հատուցելը և վոր ապահովագրվողը վարձատրություն ստանալու որինական իրավունք ունի, ապա բրիգադը տալիս է իր մանրամասն յնգրականությունը վարձատրություն տալու անհրաժեշտության մասին: Այն ակտերի վրա, վորոնցով ձիշտ է մերժված

վարձատրություն վճարելը, բրիգադը նշում է այդ ցեղակապու թյանը համաձայն լինելու մասին:

Ստուգելով այն ակտերը, վորոնցով մերժված է ֆեասներ վճարելը, բրիգադն անցնում է այն ակտերի օտուգմանը, վորոնցով ապահովագրական վարձատրություն տրված է: Դրա նպատակն է հայտարարել տպորինի կերպով ապահովագրական վարձատրություն վճարելու փաստերը, որինակ, յերբ գույքը փչացել է բացահայտ անտնտեսվարության և դեպի ապահովագրված գույքը ֆեասաբար վերաբերմունք ունենալու հետևանքով: Այդ ակտերն ստուգելուց հետո բրիգադը կամ հաստատում է ֆեասների վճարման ճշտությունը, կամ վորոշում է, վոր վճարումը յեղել է սխալ և գույքը փչացել է անտնտեսվարությունից: Այդ ապացուցելու համար բրիգադը պետք է մեջ բերի իր նկատած փաստերը և ցույց տա գույքի կորստի կոնկրետ հանցավորներին: Բրիգադի ցեղակապությունը հիշատակվում է ստուգման ակտի մեջ:

Միաժամանակ բրիգադը պարզում է, թե արդյոք լախպանում է գյուղական ապահովագրական հանձնաժողովը (կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովի ներկայացուցիչները) ակտեր կազմելու համար օրենքով սահմանված ժամկետները: Բրիգադը յուրաքանչյուր ակտով պարզում է, թե յերբ է հայտնել ապահովագրվողը ֆեասի մասին և յերբ է գյուղական հանձնաժողովն ակտ կազմել, ժամանակին է արդյոք գյուղական հանձնաժողովը ակտերն ուղարկել շրջանային ապահովագրական հանձնաժողովին: Ժամկետ-

ների խախտման, քաջքուկի բողոք հայտարարված դեպքերի մասին պետք է նշել ակտի մեջ, ցույց տալով կոնկրետ հանցավորներին:

Այնուհետև բրիգադը պարզում է անասունների անկման, հրդեհների, ցանքերի փչացման այն բողոք դեպքերը, վորոնց առթիվ ապահովագրական ակտեր կազմված չեն յեղել: Այս նպատակով բրիգադը ոգտրվում է գյուղխորհրդի տված տեղեկություններից, կոլտնտեսությունների հաշվառման մատյաններից, հարցաքննում է կոլտնտեսականներին և այլն: Հատուկ ձևի բլանկի վրա բրիգադը կազմում է անասունների անկման, հրդեհների և ցանքերի փչացման այն դեպքերի ցուցակը, վորոնց առթիվ ապահովագրական ակտեր կազմված չեն յեղել, ցույց տալով թե ինչու այդ մասին հայտնված չի յեղել և ով է մեղավորը: Ակտերի մեջ պետք է նշված լինի, թե այդ տեղի յե ունեցել այն պատճառով, վոր ապահովագրվողները տեղյակ չեն յեղել ապահովագրության վերաբերյալ օրենքին, թե կոլտնտեսության վարչության, գյուղական ապահովագրական հանձնաժողովի անվության կամ, վերջապես, ապահովագրված գույքի փչացումը գիտավորյալ կերպով թագցնելու հետևանքով: Բրիգադը պետք է նկատի ունենա, վոր ակտեր չկազմելու դեպքերի մեծագույն մասն ընկնում է մատղաշ գյուղատնտեսական անասունների անկման և մանր անասունների (վոչխարների, խոզերի, այծերի) անկման դեպքերին:

4. ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ՍՅՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հրդեհից առաջացած վնասներն ստուգելիս նախ և առաջ պետք է մանրազննին պարզել հրդեհի պատճառներն և այն, թե արդյոք վնասները չեն վճարվել աշխիսի գույքի համար, վորը չի ապահովագրվում (անմարդաբնակ և չպաշտպանվող շենքեր և այլն), ինչպես նաև վճարման դեպքեր, գույքի խակական արժեքը գերազանցող գումարներով:

Հաճախ ակտի հրդեհի պատճառները սյունյալիում գրում են «անհայտ են» Բրիգադը պետք է վկայների հարցաքննության միջոցով պարզի հրդեհի պատճառները: Յեթե հրդեհի վերաբերյալ գործը քննչական օրգանների մոտ է գտնվում, ապա անհրաժեշտ է կապվել նրանց հետ: Յեթե քննությունն արդյունք չի տվել և հրդեհի պատճառները չեն պարզվել, ապա վնասներն անմիջապես պետք է վճարել:

Հաճախ հրդեհների վերաբերյալ ակտերում նշում են, թե հրդեհի պատճառը լեզիլ է ճյուղի խանների չաբաճիկությունը: Փորձը ցույց է տալիս, վոր լեզիկոն ճյուղի խանների չաբաճիկության հետևը դասակարգային թշնամին է ծաղկված լինում: Ուստի, նման դեպքերն ստուգելիս պետք է հատկապես մանրազննին պարզել գործի բոլոր հանգամանքները:

Յեթե ցույց է տրվում, վոր հրդեհը տեղի յե ունեցել Վվստարանների անկանոն լինելուց», «կրակի հետ անզգուշ վարվելուց», ապա նույնպես պետք է հետա-

գոտել թե ինչու՞ն է այդ արտահայտվել, թե արդյոք ներկա դեպքում հասարակ անզգուշություն է յեղել, գծախտ պատահար, թե հրդեհն առաջ է յեկել բացահայտ անտնտեսավարություն հետևանքով:

Մի շարք շրջանային ապահովագրական հանձնաժողովներ հրդեհային վնասները չեն վճարում, հիմնվելով այն բանի վրա, վոր վառարաններն անկանոն են կամ կրակի հետ ապահարար անզգուշ են վարվել: Դա վաճառողը դեպքերում է ճիշտ, քանի վոր վառարանների անկանոն լինելը կարող է և գույքատերը չնկատել: Այլ բան է, յերբ սխառնատիպար չարամտորեն խախտում են հակահրդեհային պաշտպանություն կանոնն րը կամ կոպիտ անզգուշություն է թույլ տրվում: Նման դեպքերում վնասները չպետք է վճարել:

Յեթե վնասը կոլտնտեսության մեջ տեղի յե ունեցել առանձին կոլտնտեսականի մեղքով և վաճառահանուր անտնտեսավարության արտահայտություն է յեղել, այսինքն, յեթե կոլտնտեսության մեջ հսկողություն է սահմանված աշխատանքային կարգապահություն վրա և լավ է դրված հանրային սեփականություն պաշտպանության գործը, ապա վնասները պետք է վճարել: Նույնը վերաբերում է և գյուղատնտեսական անասունների անկման դեպքերին:

5. ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ԱՆՈՓՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ԱՏՈՒԳԵԼԻԻ ՀԱՄԱՐ

Ստուգող բրիգադը նախ և առաջ պետք է պարզի, թե արդյոք ապահովագրված անասունի անկումն անտնտեսվարությունից չի տեղի ունեցել: Ուստի բրիգադը պետք է լավ գիտենա, թե ինչ է հասկացվում «բացահայտ անտնտեսվարություն» ասելով:

Բրիգադը կհանդիպի այնպիսի դեպքերի, յեբք ձիւերը սատկում են ծակոցներէց, իսկ խոշոր յեղջուրավոր անասունները փորոտիքը խիստ ուռչելուց: Այդ հիվանդությունները, մեծ մասամբ, անասուններին անկանոն կերակրելու, նրանց վատորակ կամ վատ նախապատրաստված կեր տալու հետեանք են լինում: Յեթե նույն անտեսության մեջ անասուններէ ծակոցներէ ու փորոտիքը խիստ ուռչելու կրկնակի դեպքեր են լինում, ապա այդ ցույց է տալիս, վոր անասնատիրն անտնտեսվար է:

Սակայն, լինում են դեպքեր, յեբք այդ հիվանդությունները պատահում են անասնատիրոջ կամքից անկախ: Որինակ, ձին կարող է ծակոցներով հիվանդանալ կերը լավ չծամելու, վատ ատամներ ունենալու կամ արագ ու ազահարար ուտելու դեպքում: Խոշոր յեղջուրավոր անասունի փորոտիքը կարող է ուռչել դժբախտ պատահականությունից, որինակ, ածասունը կարող է անձրեի տակ մնալ սրտաւախքում և թաց կեր ուտել: Նման դեպքերում ապահովագրական վարձատրություն պետք է վճարել:

Անասունների անկումն մրսելուց (թոքերի բորբոքում և այլն) հաճախ նույնպէս անտնտեսվարության հետեանք է լինում (անասուններին ցուրտ շնեքերում պահելը, շատ սառն ջուր տալը և այլն): Սակայն, վոչ ամեն ժամանակ կարելի յէ կանխել ցրտառությունը, որինակ, յեթե ցուրտ ժամանակ ճանապարհ դնալիս հարկադրված կանգնեցնում են տաքացած ձիուն բաց տեղում:

Նույնը պետք է ասել և անասունների անկման մասին զանազան տեսակի դժբախտ պատահարներից: Անասունները, գիշատիչ գաղաններէ դահ են դառնում, խեղդվում են, գնացքի տակ են ընկնում գլխավորապէս պաշտպանության բացակայության պատճառով: Վերքերը, տրորվածքները, կոտրվածքները նույնպէս հաճախ անասունների հսկողության բացակայության և անկանոն լծելու հետեանք են լինում: Որինակ, անասունը կարող է խեղդվել լողանալու ժամանակ, ընկնելով փոսի մեջ, թեև հսկողություն նրա վրա յեղել է: Նա կարող է հեռանալ հոտից և վարքի դադանիդո՝ դառնալ, չնայած վոր նրան պաշտպանում են հովիվներն ու պահապան շները: Այլս ստանքի ժամանակ ձին կարող է միասակել կամ վիրավորվել, չնայած, յոր հսկողություն կա:

Անասունները կարող են հյուժվել կամ այն պատճառով, վոր անտնտեսվարություն կեր չի մթերել կամ այն փչացել է վատ պահելուց: Բայց կարող են պատահել նաև դեպքեր, յեբք անտնտեսվարությունը կեր չի ունենում անբերրության հետեանքով: Այս դեպքում անասուն-

ների հյուծվելը չի կարելի անտնտեսվարութանը վերագրել: Բացի այդ, անասունները կարող են հյուծվել աշակերտի ծանր հիվանդութիւնից, վորը կանխել չեք կարելի, ծերութեան պատճառով և այլն:

Քոսից անասունները կարող են սատկել վատ պահպանման, բուժման համար միջոցներ ձեռք չառնելու հետևանքով: Քոսից սատկած անասունների համար ապահովագրական վարձատրութիւն տալը չի թույլատրվում:

Անասնաբուժական անձնակազմի յեզրակացութիւնն այն մասին, վոր անասունը սատկել և «ծերութիւնից» առանց նշելու դրա անմիջական պատճառները, չի կարող հիմք ծառայել ինչպես ֆեասներ հատուցելու, նույնպես և դրամ վճարելը մերժելու համար: Բրիգադը պետք է նկատի ունենա, վոր վատ պահպանելն ու կերակրելը, ինչպես նաև ուժից վեր աշխատեցնելն առանձնապես անդրադառնում են հենց ծեր անասունների վրա:

Մի խոսքով, ստուգող բրիգադը բոլոր դեպքերում ապահովագրական վարձատրութիւն վճարելու կամ չվճարելու հարցը պետք է լուծի նայած այն բանին թե արդոք անասունը սատկել և անխափանելի պատահականութեան պատճառով, թե անտնտեսվարութեան հետևանքով: Կոլտնտեսութիւնների ֆեասների վճարման ճշտութեան հարցը քննելիս անհրաժեշտ է համոզվել, վոր կոլտնտեսութեան ղեկավար կազմը վոչ անմիջական, վոչ էլ անուղղակի կերպով ժեղավոր չի գույքի կորստի մեջ: Բայց, յիշե՛ք գույքը փչացել է

առանձին կոլտնտեսականների անտնտեսվարութեան հետևանքով, չնայած վոր կոլտնտեսութեան վարչութիւնը միջոցներ ձեռք առել է ապահովագրած գույքը պաշտպանելու համար, ապա ֆեասները պետք է հատուցել:

Այս պարզաբանելու համար բերե՛ք յերկու որինակ.—

1-ին որինակ. կոլտնտեսային բրիգադներից մեկում ձին սատկել է ծակոցներից: Պարզվել է, վոր նրա մահվան անմիջական պատճառը կոլտնտեսական ախոռապանն և հանդիսանում, վորը գերակերակրել է ձիուն և վոր ձիերի անկման դեպքեր ծակոցներից (պատճառը՝ անկանոն կերակրում) տվել բրիգադում մինչ այդ էլ նկատվել է: Բրիգադավարն ու կոլտնտեսութեան վարչութիւնը միջոցներ ձեռք չեն առել ձիերի կանոնավոր կերակրումը կազմակերպելու, ախոռապանների անձնական կազմն ստուգելու համար: Ուստի, ապահովագրական վարձատրութիւն չպետք է վճարել:

2-րդ որինակ. կոլտնտեսային բրիգադներից մեկում սատկել է 2 ձի թոքերի ուռուցքից: Պարզվել է վոր կոլտնտեսական ախոռապանը հարած զրութեան մեջ ձիերին խիստ քշել և ուժասպառեալ է արել: Զիյրի շահագործումը բրիգադում ճիշտ է կազմակերպված, ախոռապաններն ստուգված են, այն ախոռապանը, վորը ձիերին խիստ քշել է, նկատված չի յեղել դեպի հանրային սեփականութիւնն անտնտեսվար վերաբեր-

ժուհիք ունենալու մեջ: Այս դեպքում ապահովագրական վարձատրություն կուտոտեսությանը պետք է վճարել:

6. ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ՅԱՆՔԵՐԻ ՓԶԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՎՏԵՐ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Ստուգում անցկացնելու ժամանակը (ձմեռ) թույլ չի տալիս վորոշելու ցանքերի փչացման և անման բոլոր հանգամանքները:

Սակայն բրիգադը կարող է և պետք է պարզի հետևյալ տվյալները. —

1) Ժամանակին, են արդյոք գյուղխորհուրդները համանել չրթապտեսչությանը հայտեր ցանքերի փչացման կամ ֆնսաման մաբին:

2) Ժամանակին են արդյոք լուծարվել ֆնսաներն այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է յեղել կրկնացանել փչացած մշակույթը:

3) Արդյոք ցանքերի նախնական ղննության ակտերը միշտ հետագայում ստուգվել են:

4) Չեն յեղել արդյոք դեպքեր, յերբ վճարվել է այնպիսի տարածույան համար, վորը փաստորեն կրկնացանված չի յեղել:

5) Իրիք ցանքերի փչացումը տեղի յե ունեցել տարերային աղետներից, թե վոր ապահովագրական պատճառներից և անտեսեմարությունից, որինակ, ուտ ցաճից, սերմացուն անկանոն ծածկելուց, անպետք հողամասերում ցանք կատարելուց և այլն:

6) Ստուգվել է արդյոք փչացած ցանքերի տա-

րածությունը ֆնսաներ լուծարելու ժամանակ, տեղում չափելու միջոցով կամ կուտոտեսության տնտեսական աւ հողային պլաններով:

Վորպեսզի ստուգված լինի թե ինչպես են կատարել կուտոտեսություններն ագրոկանոնները պետք է ոգտագործել կուտոտեսությունների փաստաթղթերը, ինչպես նաև տեղեկություններ ստանալ ՄՏԿ և շրջ. հողբաժիններից: Կուտոտեսության փաստաթղթեր կարող են լինել հետևյալները. —

ա) աշխատանքի նարյաղները, վորոնց հիման վրա կարելի յե վորոշել ցանքի ժամանակը:

բ) համաձայնագրի ակտերն աշխատանքի ընդունելու մասին վորոնց հիման վրա կարելի յե դատել հողի նախացանքային մշակման, սերմացուն կանոնավոր ծածկելու մասին և այլն:

գ) Վորակի վրա հսկող տեսուչների ակտերը, վորոնց մեջ նշված է մշակման թերություններն առանձին հողամասերում:

դ) Շրջապային գյուղատնտեսների ակտերը:

ե) Հնգորյա ամիոբուսներ ցանքի ընթացքի մասին:

Բացի այդ, անհրաժեշտ է հարցաքննել կուտոտեսականներին, դաշտագործ-բրիգադավարներին, վորակի վրա հսկող տեսուչներին և այլն:

Հաճախ ֆնսաները չեն հատուցում փչացած մշակույթը չկրկնացանելու համար: Մինչդեռ, յերբեմն ապահովագրվողը կրկնացանք չի կատարում ցանքաշրջանառությունը չխախտելու համար: Այդ դեպքում

պետք է վճարել ֆլաանները: Չի կարելի նաև առանձին ազրոկանոններ չկատարելու համար ապահովագրական վարձատրություն չվճարել այն դեպքերում, լեբը այդ ֆլաաններ առաջ չի բերել և չի ավելացրել դրանց չափը: Որինակ, չի կարելի կարկտահարումից առաջացած ֆլաանները չհատուցել այն պատճառով, վոր ցանքը կատարվել է վոչ շարքացանով:

7. ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ԿՅՈՒՔԻ ՈՊՈՇՈՎԵԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Անձնական ապահովագրության ֆլաանների վճարման ստուգումը նույն նպատակն ունի, ինչ վոր գույքային ապահովագրության ստուգումը, այսինքն, ապուրիների վճարումներ, սխալ մերժումներ, քաջըջուկներ հայտնաբերելը և այլն:

Բրիգադի ղեկավարը պետք է ապահովագրական տեսչությունում ստուգի անձնական ապահովագրության ֆլաանների ռեեստրը և պարզի, թե արդյոք բոլոր ֆլաաններն է տեսուչը մտցրել ցուցակի մեջ: Միաժամանակ, բրիգադը պետք է նույն տեղում ստուգի բոլոր այն փաստաթղթերն ու տեղեկանքները, վորոնց հիման վրա ապահովագրական նպաստ է տրվել: Գալով այն կոլեկտիվը, վորտեղ ապահովագրվողն է ախատել, բրիգադն ստուգում է, թե արդյոք ճիշտ տեղեկանքներ է տվել ոժանդակող հանձնաժողովին ապահովագրվածների մասին: Բանը նրանում է, վոր պատահել են դեպքեր, յերբ սխալ և նույնիսկ կեղծ տեղեկանքներ

են տրվել այնպիսի անձանց ապահովագրության մասին, վորոնք իրականում ապահովագրված չեն յեղել իսկ յերբեմն տեղեկանքներում նշվել է ապահովագրական վճարումներ կատարելու մասին, ինչ վոր իրականում չի յեղել:

Տեղեկանքներում մատնանշված ազգանուններն ստուգվում են կամ տվյալ կոլեկտիվում ապահովագրվածների անվանական ցուցակով, կամ հայտարարություններով (յեթե ապահովագրությունը կատարվել է վոչ ցուցակներով):

Անհրաժեշտ է նաև ստուգել, թե արդյոք անձամբ են ստորագրել ապահովագրական անվանական ցուցակներում կամ հայտարարություններում և արդյոք ցույց են տրված այն անձինք, վորոնց ժառանգություն է թողնված ապահովագրական նպաստը:

Ապահովագրական մուծանքների վճարումը կարելի չէ ստուգել դրամանավաճքերի անվանական վճարման ցուցակներով, ընդվորում, պետք է ստուգել թե արդյոք ստորագրել են ապահովագրական վճարումներ կատարողները և ցույց է տրված արդյոք յուրաքանչյուր վճարում ստանալու ժամանակը:

Յեթե ստուգումը պարզում է, վոր ոժանդակող հանձնաժողովը սխալ կամ ապուրիների տեղեկանք է տվել ապահովագրվածի մասին, ապա ստուգող բրիգադը համապատասխան ակտ է կազմում այդ մասին, վորը կցվում է ստուգման ընդհանուր ակտին:

Վնասների վճարման ճշտությունն ստուգելու հետ միասին բրիգադը պետք է ուշադրությամբ նա-

նութանա, թե ընդհանրապես ինչպես ե ղըված կյանքի ապահովագրության գործը յաւրաքանչյուր կօշեկ-տիվում:

Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել ապահովագրվածներ ընդգրկելու, դրամահավաքների աշխատանքի վորակի, գանձված վճարումների հաշվառման կարգի ե Պետապի որդաններին ժամանակին փոխանցելու վրա: Անհրաժեշտ ե ստուգել, թե արդյոք տրված են վկայականներ ապահովագրվածներին, ե նշվում ե արդյոք նրանց մեջ ապահովագրական վճարումներ կատարելու մասին:

Ձյն դեպքերում, յերբ բրիգադն անհրաժեշտ ե համարում այցելելու ապահովագրվածի ընտանիքը կամ այն անձին, վորն ապահովագրական նպաստ ե ստացել ե հարցաքննելու նրանց, ապա այդ պետք ե անել:

8. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒԹ ԱՊԱՀՈՎՈՐՎԱԾ ԳՈՒՅԻՒ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վնասների վճարման ճշտությունն ստուգելիս, մանավանդ այն կոլտնտեսություններում, վորտեղ հաճախ հրդեհի ե անասունների անկման դեպքեր են նկատվել, ստուգող բրիգադը գույքի կորստի պատճառները պարզելու համար պետք ե այդ կոլտնտեսություններում ապահովագրված գույքի դրության ստուգատես կատարի:

Առաջին հերթին պետք ե կոլտնտեսության մեջ ստուգել, թե ինչ դրության մեջ ե անասունների

պահպանման ե խնամքի գործը: Բրիգադը նայում ե ախոռները, անասնաբակերը, խոզմարանները ե այլն, ստուգում ե, թե արդյոք ապահովված են անասունները կերով, ճիշտ են արդյոք շահագործվում, պահպանվում են արդյոք կոլտնտեսության մեջ անասնաբուժական-սանիտարական հսկողության կանոնները (հիվանդ անասունների առանձնացում, նրանց խնամքի կազմակերպում, ախտահանում ե այլն):

Հակահրդեհային պաշտպանությունն ստուգելիս անհրաժեշտ ե պարզել, թե արդյոք սարքին ե հրեջ ինվենտարը, սահմանված ե արդյոք պահպանների հերթապահություն, կատարվում ե արդյոք ծխանցքների, ծխնելույղների վերանորոգում, մաքրում ե այլն:

Ստուգող բրիգադը պետք ե նկատի ունենա, վոր ապահովագրված գույքի դրության ստուգատեսը կոլտնտեսություններում թույլ կտա հայտարարելու կոլտնտեսության պաշտպանության գործունեության սեփականության պաշտպանության գործում յեղած թերությունները ե կանխելու գյուղատնտեսական անասունների, շներերի ե այլ արժեքների կորուստը:

Ապահովագրված գույքի պահպանման ե պաշտպանության գործում նկատված բոլոր թերությունները բրիգադն արձանագրում ե հատուկ ակտերում, վորի մեկ օրինակը մնում ե կոլտնտեսությունում, մյուս օրինակը հանձնվում ե ջրջանային ապահովագրական տեսչությանը: Յեթե հայտարարվում են հովադրական տեսչությանը, Յեթե հայտարարվում են դեպի գույքը բացահայտ անտնտեսվար վերաբերմունք ունենալու փաստեր, ապա բրիգադի ղեկավարն ան-

միջապես հայտնում է այդ մասին գյուղխորհրդին, ջրվերակային և ջրջանային ապահովագրական տեսչությանն անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար:

9. ԲՐԻԳԱԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Իր աշխատանքն ավարտելուց հետո բրիգադը կազմում է ապահովագրական ֆնանսների ստուգման ահա (հատուկ ձևի բլանկի վրա). Ակտի մեջ բրիգադը ցույց է տալիս, թե ինչ պատճառով է փչացել կամ ֆնանսվել գույքը, տալիս է իր յեղրակացությունը ֆնանսներ վճարելու կամ չվճարելու ճշտություն մասին, նշում է, թե ով է մեղավոր դրամը սխալ վճարելու կամ ապուրինի կերպով չվճարելու, ինչպես նաև քաշքըշուկի մեջ:

Այն բոլոր դեպքերում, յերբ գյուղական ստուգող բրիգադը գտնում է ջրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշումն ապահովագրական վարձատրության վճարելու կամ չվճարելու մասին սխալ, ապա նա պետք է մանրամասն հիմնավորի իր յեղրակացությունը:

Եռւյն ահաում ստուգող բրիգադը բոլոր նյութերի հիման վրա յեղրակացություն է տալիս գյուղական ապահովագրական հանձնաժողովի աշխատանքի վորակի մասին:

Այդ ահաին պետք է կցված լինեն հատուկ ահաեր կոլանտեսություններում ապահովագրվա գույքի գրության մասին, ահաեր ստուգման ժամանակ հայ-

տաբերված, ապահովագրական որգաններին չհայտնված, ֆնանսների մասին, կոլանտեսականների բնգհանուր ժողովների վորոշումներն ստուգող բրիգադների գեկուցումների առթիվ և այլ նյութեր:

Այս բոլոր փաստաթղթերը բրիգադավարն անձամբ պետք է հանձնի ջրջանային (քաղաքային) ապահովագրական տեսչությանը և ստանա հատուկ տաացական, իսկ յիթե ստուգման ժամանակ պարզվում է, վոր ապահովագրական տեսուչը չարարելու թյուններ է կատարել, ապա նյութը հանձնվում է ջրջանային ապահովագրական հանձնաժողովի նախագահին:

Գյուղական ստուգող բրիգադի նյութերը ջրջանային ապահովագրական հանձնաժողովի կողմից քննվելիս բրիգադի ղեկավարն անհրաժեշտ բացատրություններ պետք է տա այն բոլոր դեպքերի մասին, յիրբ բրիգադը համաձայն չի յեղել ջրջանային ապահովագրական հանձնաժողովի սկզբնական վորոշմանը, ինչպես նաև ստուգման ժամանակ հայտաբերված, քաշքըշուկի, գյուղական ապահովագրական հանձնաժողովների վատ աշխատանքի և Պետապի որգաններից ֆնանսներ թագցնելու բոլոր փաստերի մասին:

10. ՍՏՈՒԳՈՂ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՅԵՎ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

ԽՍՀՄ Ֆինժողկոմատի 1936 թ. հոկտեմբերի 9-ի հրամանով հատկացված է 300.000 ռ. այն լավագույն ահաիվիստներին պարգևատրելու համար, վորոնք

ստուգման աշխատանքի բարձր նմուշներ են ցույց տվել: Պարզևատրումը կատարելու յե՛ն Պետապի հան-
րապետական վարչությունը շրջանային ապահովա-
գրական հանձնաժողովների առաջադրությամբ:

Պետապի գլխավոր վարչությունը նույնպես պար-
զևատրելու յե լավագույն ստուգող բրիգադներին ու
ակտիվիստներին: Այդ նպատակով սահմանված է հե-
տևյալ պարզեցները՝

10	պարզև ստուգող բրիգադների համար	500-ական ու.
15	»	» 300 ական »
10	» ակտիվիստների	» 300-ական »
20	»	» 200-ական »
50	»	» 100-ական »

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ

(Հաստատված ԽՍՀՄ ԺԿԽ կողմից 20-ին մայիսի 1933 թ.)

ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ Ե ՊԵՏԱՊՈԸ ՀԱՏՈՒ- ՑԱՆՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 6. Պետապը հատուցանում է ապահովագրված գույքի վնասները միայն այն դեպքում, յեթե այդ գույքի կորուստը հետևանք է տարերային աղետների և դժբախտ դեպքերի, վորոնք անկախ են գույքատի-
րոջ կամքից:

§ 7. Շենքերի, արդյունաբերական ձեռնարկ-
ների, ինվենտարի, տրանսպորտի միջոցների և կոլ-
տընտեսությունների մյուս գույքի ապահովագրության
համար (գյուղատնտեսական կոմմունիստների, գյուղա-
տնտեսական արտելների և տոգերի) Պետապը հատու-
ցանում է հրդեհից կայծակահարուժից և շոգեկաթսա-
ների պայթուժից (թեկուզ կայծակի հարվածը կամ

պայթումը հրդեհ չեն առաջացնում) հեղեղումից յերկրաշարժից, փոթորկից, մրրկից, տարափից, փլզումներից և սողուններից առաջացած վնասները:

§ 8. Կոլտնտեսականների շենքերի ապահովագրության համար Պետապը հատուցանում է հրդեհից, կայծակահարությունից (թեկուղ կայծակի հարվածը հրդեհ չի առաջացնում) հեղեղումից, յերկրաշարժից, փլզումներից և սողուններից առաջացած վնասները:

§ 9. Մենատնտես տնտեսություններին պատկանող շենքերի և տնայնագործական արհեստանոցների (սարքավորման հետ միասին) Պետապը վճարում է հրդեհից, կայծակահարությունից (թեկուղ կայծակի հարվածը հրդեհ չի առաջացրել) առաջացած վնասները:

§ 10. Պետապը հատուցանում է նաև տարերային ադետի ժամանակ հրդեհից, հեղեղումից առաջացած շենքերի և ուրիշ գույքի վնասները, յեթե հրդեհը հանգցնելու համար անհրաժեշտ է քանդել շենքը, տանիքը և այլն:

§ 11. Գյուղատնտեսական անասուններն ապահովագրելու համար Պետապը հատուցանում է հիվանդություններից, բնական մահից և դժբախտ դեպքերից (հրդեհից, կայծակահարությունից, հեղեղումից և այլն) ընկած անասունների վնասները, ինչպես նաև վարակիչ հիվանդությունները վորոշելու և վերացնելու համար անասնաբուժի կամ անասնաբուժական կարգադրությամբ մորթված անասունների վնասը:

Մանրություն.— Յեթե անասունը վրտը կոտրել է կամ ստացել է այլ վնասվածք, վորը

նրան դարձրել է անպետք վորպես բանող ուժ. կամ վոչ արդյունավետ անասուն, մորթվել է մսի համար, այլ և յեթե անասնաբուժի կարգադրությամբ մորթված է վորպես պիտանի սննդի համար, ապահովագրական վարձատրություն չի հատուցվում:

Յեթե կոլտնտեսությունում անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ դժբախտ դեպքի հետևանքով մորթվել է ցեղական անասունը, կամ ազնվացրած անասունը, այդ դեպքում Պետապը կուտրնտեսությունը վճարում է տարրերությունը, վորը առաջացել է մսի արժեքի և ապահովագրական վարձատրության միջև, այս դեպքում մսի արժեքը հաշվվում է կոնվենցիոն գներով, յեթե կոլտնտեսությունը ապացուցի, վոր միտը վաճառել է այդ գներով: Մնացած դեպքերում մսի գինը հաշվվում է կոլտնտեսային շուկայի գներով:

§ 12. Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքսերի ապահովագրության համար Պետապը վնասները հատուցանում է՝

ա) Կարկտահարությունից, և նույնպես նրան ուղեկցող փոթորկից և տարափից:

բ) Յրտահարությունից, լժջումից, փսումից և հեղեղումներից:

գ) Յերաշտից:

կոլտնտեսութիւնների գյուղատնտեսական կուլ-
տուրաների ցանքօքերի ապահովագրութեան համար
Պետապը բացի այդ, հատուցանում է նաև կրակից
առաջացած գյուղատնտեսական կուլտուրաների չհրնձ-
ված ցանքերի ֆինանսերը:

§ 13. Պետապը հատուցանում է կուլակութեան
դեմ ակտիվորեն պայքարող կոլտնտեսութիւններին,
ինչպես նաև կոլտնտեսականների և մենատնտեսներին
գուլջի կորստից կամ ֆնասվածքից առաջացած ֆնա-
սները լիակատար արժեքով, յետե գուլջի կորուստը
կամ ֆնասվածքը տեղի յե ունեցել դատակարգային
վրեժխնդրութեան գործողութեան հետևանքով:

Դատակարգային վրեժխնդրութեան փաստը պետք
է հաստատվի շրջանային ապահովագրական հանձնա-
ժողովի հասուկ վորոշմամբ, այն բոլոր հանգամանք-
ների ժանրամասն ուսումնասիրութեան հիման վրա, վո-
րոնք կապված են գուլջի կորստի կամ ֆնասվածքի հետ:

ՎՈՐ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱՊԸ ԶԻ ՀԱՏՈՒ- ՑԱՆՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 14. Պետապը չի հատուցանում ֆնասները այն
գեպքերում, յերբ ապահովագրված գուլջի կորուստը
կամ ֆնասվածքը տեղի յե ունեցել կոլտնտեսութեան,
կոլտնտեսականի և մենատնտես տնտեսութիւնների
մեղավորութեան պատճառով, այսինքն՝

ա) բացարձակ անտնտեսութեան հետևանքով.

բ) հասարակական սեփականութեան պաշտպա-
նութեան բացակայութեան հետևանքով.

գ) ապահովագրողի չարամիտ գործողութիւնների
հետևանքով:

§ 15. Պետապը գուլջատիրով ֆնասը չի հատու-
ցում ապահովագրված ընկած անասունի համար այն
դեպքում, յետե գուլջատիրը մեղավոր է անասունի
անկման համար, այսինքն, յետե այդ անկումը առա-
ջացել է նրա սխալ գործողութիւնների հետևանքով.
կամ թե անհրաժեշտ միջոցներ ձեռք չի առել այն ե՝

ա) յետե անասունի անկման պատճառը յեղել է
հիվանդութիւնը կամ դժբախտ դեպքը վորը տեղի
յե ունեցել բացարձակ անտնտեսութեան հետևանքով
(անասունի անբավարար կերակրելը ե այդ պատճառով
նրան հյուծելը, կեղտոտ կեր տալը, սխալ լծելը, անա-
սունին տեղական պայմաններին վոչ հարմարեցված
շենքում պահելը, հիվանդ անասուններին վատ խնա-
մելը, անասունի հիվանդանալու մասին անասնաբու-
ժին կամ գյուղխորհրդին իր ժամանակին չհայտ-
նելը):

բ) յետե անասունի մահը տեղի յե ունեցել նրան
անհոգի կերպով շահագործելու, կամ նրա նկատմամբ
ցուլց ալած ֆնասարարական վրարբրմունքի հետե-
վանքով, նրա ուժից բարձր աշխատանքով ծանրաբե-
նելու, անասունին ծեծելու, վազացնելու, ֆնասակար
կեր տալու, քրտնած անասունին սառը ջուր խմաց-
նելու ե այլն.

Յետե անասնաբուժը կամ անասնաբուժակը հառ-

տատեն, վոր յնկած անառուներ վաղակված ե վարակիչ հիվանդութիւններով ե անասնասանիտարական կանոնների մասին պարտադիր վորոշումները գուշքատիրոջ կողմից չպահպանելու հետեանքով:

§ 16. Պետապը գյուղատնտեսական կուլտուրաների ցանքսերի ֆլանները ցանքսատիրոջը չի հատուցանում հետևյալ դեպքերում՝

ա) յեթե ֆլանված մշակույթը չի վերացանված, չնայած նրա վերացանման անհրաժեշտութեան, ե ըստ տարվա յեղանակի հնարավոր եր վերացան կատարել:

բ) յեթե տնտեսութեանը վոչ մի միջոց ձեռք չի առել տուժած տարածութեան բույսի հետագա մշակման ե խնամելու համար, ինչպես սովորաբար մյուս տնտեսութիւններն են կատարում, ֆլանսի չափը պակասեցնելու նպատակով (բուզից, քաղհան ե այլ աշխատանքներ):

գ) յեթե տարեբային ադետը առաջացել ե տարվա այնպիսի ժամանակում, յերբ տվյալ տեղում ե տարվա պայմաններում ապահովագրված կուլտուրայի բերքը պետք ե հավաքված լինի:

դ) յեթե տուժած հողամասում տնտեսութիւնը թույլ տա մինչև լուծարքային ակտի կազմելը անասուններ արածացնելու, խոտ հնձելու, կանաչ կերի կամ սիլոսի համար հավաքելու, կամ թե թույլ տա այլ գործողութիւններ վորոնք պակասացնում են տարեբային ադետից հետո անացած բերքի արժեքը:

Ծանոթութիւն.—Յեթե շրջանային հանձնաժողովը ներկա կանոններով սահմանված ժամանա-

կամիջոցում արձանագրութիւն չի կազմի այն դեպքում տնտեսութիւնն այս մասին հայտնում ե գլուղխորհրդին, վորից հետո իրավունք ունի վերացանելու կամ տուժած տարածութեան կուլտուրան հավաքելու, խոտի, կանաչ կերի, կամ սիլոսի համար, ե այս դեպքում չի զրկվում ապահովագրական վարձատրութիւն ստանալու իրավունքից:

17. Պետապը չի հատուցանում հրդեհից վոչ չընչացված շենքերի, ինվենտարի ե ալ գույքի համար, յեթե ֆլանը տեղի յե ունեցել տնտեսութեան կողմից հակահրդեհային պահպանութեան կանոնները խախտելու հետեանքով (վաւարանների ծխնելոյգների վոչ սարքին պահելը, շենքի կամ կալի մոտ խարույկ վառելը, հրավտանգ (огнеопасных) նյութերի հետ անփութ վարվելու ե այլ):

Ինչպես նաե, յեթե հրդեհն առաջացել ե ողեծխումից, կամ կոպիտ անզգուշութեան հետեանքով:

18. Այն ֆլանները վորոնք տեղի յեն ունեցել գույքի գողացվելու կամ կորչելու հետեանքով, ինչպես նաե արտադրութեան ընդհատումից, չեն հատուցվում:

19. Բացի այդ, առկա այն պատճառներից, վորոնցից ապահովագրված գույքերը վոչնչացվիլ ե, Պետապը ֆլանները չի հատուցանում այն դեպքում, յերբ գուշքատիրը՝

ա) պարտադիր կոպարային ապահովագրութեան գույքը թաղցրիլ ե հաշվառումից:

ը) չի հաղորդել սահմանված ժամկետին ապահովագրված գույքի փնտրի մերժելու մասին.

զ) վեց ամսվա ընթացքում արձանագրության հաստատման որից պահանջ չի ներկայացրել ապահովագրական առկային, ապվարձատրութունն առանալու մասին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0977223

804

29 ДЕК 1936

1

3272